

Հավասարասրուն եռանկյուններ

Ժամանակի սահմանափակում՝ 1 վայրկյան
Հիշողության սահմանափակում՝ 256 MB
Կշիռ՝ 100 միավոր

Շարադրանք

Իշխան Փոքրիկը շատ է սիրում փայտիկներով խաղալ: Փոքրիկը ունի n փայտիկներից բաղկացած հավաքածու $a_1, a_2 \dots a_n$ երկարություններով, ընդ որում փայտիկները համարակալված են և փայտիկների երկարությունները կարող են տարբեր լինել:

Մի անգամ Փոքրիկը ընտրեց երեք փայտիկ իր հավաքածուից, կառուցեց դրանցով եռանկյուն և նկատեց որ ստացված պատկերը ավելի գեղեցիկ է, քան այն եռանկյունները որոնք ստացվում էին իր մոտ դրանից առաջ: Պարզվեց որ այդ փայտիկներից երկուսի երկարություններն իրար հավասար էին և Փոքրիկը կառուցել էր հավասարասրուն եռանկյուն:

Փոքրիկին այնքան դուր եկավ նոր պատկերը, որ որոշեց միայն հավասարասրուն եռանկյուններ կառուցել իր փայտիկներով: Սակայն Փոքրիկը շուտ է ձանձրանում և եթե նույն փայտիկների եռյակով երկու անգամ եռանկյուն կառուցի, կձանձրանա և չի շարունակի խաղալ:

Ձեր խնդիրն է պարզել թե առավելագույնը քանի հատ տարբեր փայտիկների եռյակներ գոյություն ունեն, որոնց միջոցով կարելի է կառուցել հավասարասրուն եռանկյուն:

Ուշադրություն. Հավասարակողմ եռանկյունները նույնպես համարել հավասարասրուն:

Ավելի ֆորմալ, պահանջվում է գտնել $i < j < k$ եռյակների քանակը, որ a_i, a_j, a_k -ն կազմում են հավասարասրուն եռանկյուն:

Մուտքային տվյալներ

Մուտքի առաջին տողում տրված է n բնական թիվը: Երկրորդ տողում տրված են a_i ամբողջ թվերը ($1 \leq a_i \leq 10^9$):

Ելքային տվյալներ

Պահանջվում է գտնել իրարից տարբեր փայտիկների եռյակների քանակը, որոնք կազմում են հավասարասրուն եռանկյուն:

Օրինակ

Մուտք	Ելք
6 1 2 2 1 1 5	4

Ենթախնդիրներ

- Ենթախնդիր 1 (10 միավոր) $1 \leq n \leq 300$,
- Ենթախնդիր 2 (30 միավոր) $1 \leq n \leq 2000$,
- Ենթախնդիր 3 (60 միավոր) $1 \leq n \leq 10^5$: